ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄԲՈՂՋԱՑՈՒՄԸ (VIII Դ.)

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

VII—VIII դդ. սահմանագծին Վասպուրականը բաժանված էր մի քանի կիսանկախ իշխանությունների, որոնց իշխանները վարում էին հաճախ երկրամասի ընդհանուր շահերին չհամապատասխանող քաղաքականություն։ Մինչև VIII դ. սկզբները Վասպուրականի նշանավոր տոհմերն էին Ռշտունիները և Բագրատունիները։ Վերջիններս Հայաստանում որոշակի գերակշռություն ունեին Վասպուրականում։ 691 թ. Հայաստանի կառավարչի պաշտոնում վերստին տեսնում ենք Բագրատունի իշխանի՝ Սմբատ Բյուրատյանին, որի օրոք Արմինիայի առաջին ոստիկան Մուհամմադ իբն-Մրվանը (693—706) զորքով Միջագետքից մտավ Հարավային Հայաստան և հասավ Մոկաց Ջերմաձոր գավառը։ Թեև նախարարները գիտեին այդ հարձակման մասին և ապաստանել էին բերդերում, այդուհանդերձ՝ նա խորամանկությամբ իրար ետևից գրավեց դրանք ու բնակչությանը մեծ բռնությունների ենթարկելուց հետո անցավ Ասորիք։ Բռնադատված «բնակիչք աշխարհիս մնացին իբրև զխանձող ծխեալ ի հրոյ և իբրև զօրան վանակ փխրեալ զոր առ ոտն կոխեալ խոզից»[1]։ Մեկնելով Ասորիք, Մուհամմադ իբն-Մրվանը Արմինիայի փոխկառավարիչ թողեց Աբու Շայխ իբն Աբդալլահին (703—704), որը ևս, Ղևոնդի վկայությամբ՝ կամենում էր ոչնչացնել հայ իշխաններին։ Արաբների այս խստությունը պայմանավորված էր նրանով, որ նույն ժամանակ Աբդ-ալ Մալիքի բարեփոխումներով ավարտվեց արաբական հսկայածավալ պետության կազմավորումը[2] և նվաճումներին պետք է հաջորդեր նվաճված երկրների շահագործման կատարելագործումը։ Հենց այդ ժամանակ էլ կազմավորվեց Արմինիա վարչական միավորը՝ բաղկացած չորս մասից։ Վասպուրականը մտնում էր III Արմինիայի կազմի մեջ[3]։ Այս վարչական բաժանումը մասնատում էր հայոց ռազմական ու տնտեսական կարողությունները ողջ երկրի մաշտաբով, սակայն առանձին նահանգների զինական և տնտեսական ուժերը չէր տարաբաժանում։

Օմայանների օրոք տեղական կառավարիչները ոչնչով չսահմանափակվող կամայականություններ էին ցուցահանում բնակչությունից հարկեր գանձելու համար, հարկման ենթարկելով նաև մահմեդականներին[4]։ Հայ իշխանների հանդեպ դրսևորած դաժանությունները ևս նպատակ ունեին դյուրացնել հարկահանությունը։

---

[1] «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 22։

[2] W. Muir, The Caliphate its rise, decline, and falle, Edinburg, 1924, p. 350—362

[3] «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXXI. Тифлис, 1902, стр. 11—12.

[4] Е. А. Беляев, Арабы, ислам и арабский халифат в раннее средневековье, М., 1966. стр. 192.

Հայ նախարարների հանդեպ բռնության քաղաքականությունը գտավ իր արձագանքները։ Նրանք Սմբատ Բյուրատյանի գլխավորությամբ խորհում են «հնարս գտանել, որով մարթասցեն զանձինս ապրեցուցանել»[5]։ Նախարարների մի մասը գերադասեց լքել հայրենիքը և ապաստանել Բյուզանդիայում։ Վասպուրականի նախարարները Սմբատ Բագրատունու (Բյուրատյանի) և Վարդ Պատրիկ Ռշտունու գլխավորությամբ չհետևեցին Հայաստանից հեռացող նախարարներին, որոնց պարագլուխն էր Սմբատ Բագրատունին։ «Եւ անդէն,— դրում է պատմիչը,— անջատեալ, մեկնեցան ոմանք ի նախարարաց Վասպուրական աշխարհին» և «դէմ եդեալ գնացին ի կողմանցն Վասպուրականի ի դաշտավայր մարզէն, որում Առեստակողմն կոչեն»[6]։ Սակայն, ինչպես երևում է պատմիչի հաղորդումից, Վասպուրականի նախարարները չեն ունեցել գործողության կանխորոշ ծրագիր և մեկնել են ինչ-որ միայնակյացի մոտ՝ «հարցանել զորպիսութիւն գործոյն»[7]։ Վերջինս «ոչ ինչ կարէր հրամայել. այլ միայն անձնապահ լինել և զգուշանալ ի նենգութենէն»[8]։

Սմբատ Բագրատունու գլխավորած նախարարներն անցան Արաքսի աջ ափը և Վարդանակերտ գյուղում ջարդեցին Նախճավանի արաբական կայազորը, որը փորձում էր խանգարել նրանց՝ անցնելու Բյուզանդիա։ Վասպուրականում մնացած հայ աղատազորքի վրա նույն ժամանակ հարձակվում է մեկ այլ արաբական հրոսախումբ (Վասպուրականի Գուկանք գավառի Գուկանք գյուղում)։ Վասպուրականի համեմատաբար փոքրաթիվ զորքը Սմբատ Բագրատունու գլխավորությամբ հաղթում է թշնամուն[9]։ Ո՞վ էր այս Սմբատը։ Ղեվոնդը նույն անցքերի ժամանակ հիշատակում է երկու Բագրատունի Սմբատների, որոնք պատմագիտական գրականության մեջ հաճախ նույնացվել են։ Մինչդեռ առաջինը Սմբատ Վարազտիրոցի որդին է, երկրորդը (Վասպուրականում գործող)՝ Աշոտ Բյուրատյանի[10]։

Այսպիսով, արաբական ճնշումը Վասպուրականի հայ իշխաններին հարկադրում է միաբանել։ Սակայն ոչ բոլոր տոհմերն են համախմբվում Սմբատ Բյուրատյանի շուրջը, որի մասին վկայում է վասպուրականցիների զորքի փոքրաթիվ լինելը։ Այնուամենայնիվ, միավորման փաստն առկա էր, որը և անհանգստացնում էր արաբներին։ Վարդանակերտի և Գուկանքի դեպքերը ավելի սրեցին հայ նախարարների և ոստիկանի փոխհարաբերությունները։ Վարդանակերտի ճակատամարտին մասնակից հայ նախարարները փրկվեցին հաշվեհարդարից, քանի որ անցան Եգերք, իսկ Վասպուրականի նախարարները մնացին երկրում։ 704 թ. վերստին Հայաստան վերադարձած ոստիկան Մուհամմադը վճռեց պատժել հայ նախարարներին։ Սակայն, քանի որ մի կողմից պատժվողները հիմնականում Վասպուրականի իշխաններն էին և մյուս կողմից՝ ոստիկանը վախենում էր, որ հաշվեհարդարը կարող է խալիֆին դուր չգալ, պատժելու գործը հանձնարարեց Կասիմին, որը ոստիկանի փոխանորդն էր Վասպուրականի հյուսիս-արևելյան շրջաններում և, անշուշտ,

---

5 «Պատմութիւն Ղ ե ւ ո ն դ ե ա յ», էջ 23։

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում, էջ 27։

10 J. M a r q u a r t, Osteuropaeische und ostasiatische Streifzüge, Leipzig, 1903, s. 443, 449.

առանձնակի շահագրգռվածություն ուներ դրանում։ Կասիմը իր մոտ՝ Նախնավան է հրավիրում նախարարներին և ողջակիզում[11]։ Գալիս են հիմնականում Վասպուրականի նախարարները, որոնցից Ղևոնդը հիշում է չորս տոհմի ներկայացուցիչների՝ Սմբատ Բյուրատյանին, Գրիգոր և Կորյուն Արծրունիներին, Վարազ Շապուհ Ամատունուն ու իր եղբորը[12]։ Իսկ Սամվել Անեցին պարզապես գրում է. «Կասմ ամիրայ՝ ղՎասպուրականի իշխանսն կոտորեաց»[13]։ Վասպուրականի իշխաններին հիշում է նաև Ստեփանոս Տարոնեցին[14]։ Հայ նախարարների ողջակիզումը իրականում ոստիկանի և նրա փոխանորդի մտահղացումն էր, որը հավտնություն չգտավ խալիֆի կողմից և ցնցեց ոչ միայն հայերին, այլև արաբներից ոմանց։ Արաբ մատենագիր Տաղրիբերդին այդ տարին անվանում է «հրկիզման տարի»[15]։ Խալիֆը հայերին սիրաշահելու համար Արմինիա ն.զարկեց նոր ոստիկան՝ Աբդ ալ-Ազիզին (706—709)։ Վերջինս վերաշինեց Դվինը, Հայաստան հրավիրեց վտարված նախարարներին, որոնք վերստացան իրենց իրավունքները։ Հայ մատենագիրների վկայությամբ[16] հայերի հանդեպ լավ վերաբերմունք ուներ նաև Օմար խալիֆը (717—720)։ Սակայն Հիշամ խալիֆի օրոք (724—743) դրությունն արմատապես փոխվեց։ 725 թ. Հայաստանում հարկման ենթարկվեցին թե՛ մարդիկ, թե՛ հողերը և թե՛ անասունները։ Հարկման ուժեղացումը բնականաբար ուղեկցվում էր քաղաքական մթնոլորտի ծանրացմամբ։

Այսպիսի պայմաններում Սմբատ Մամիկոնյանի որդիները՝ Գրիգորը և Դավիթը, Մրվան իբն Մուհամմադ ոստիկանի (732—750) կողմից ազատվեցին բանտարգելությունից և վերադարձան Հայաստան՝ «ի կողմանս Վասպուրական աշխարհին»[17]։ Վասպուրականում Մամիկոնյան եղբայրների հանգրվանելը պատահական չէր։ Երկրում խալիֆայության դրածոների հարուցած կամայականություններն ու հարկային բռնությունները խոր դժգոհությամբ էին համակում նաև վասպուրականցիներին։ Հայ նախարարների ողջակիզումից հետո (705) Վասպուրականի Բագրատունիները քաղաքական ասպարեզից վերացան, իսկ մյուս տոհմերը՝ տակավին թույլ էին։ Հակաարաբական և հակաբագրատունի տրամադրություններ ունեցող Մամիկոնյանների համար Վասպուրականն այն ասպարեզն էր, որտեղ նրանք կարող էին ֆրագործել իրենց քաղաքական նպատակները։ Եվ իրոք, նրանց սկզբում հաջողվում է իրենց շուրջը համախմբել Վասպուրականի իշխանների զգալի մասին։ Հավանաբար Վասպուրականում գերիշխանություն հաստատելու հա-

---

11 Արաբ հեղինակները նախարարների այրման վայրն են համարում Խլաթը («Արաբացի մատենագրերը Հայաստանի մասին», Վիեննա, 1919, էջ 105—106)։

12 «Պատմութիւն Ղևոնդեայ», էջ 34—35։

13 «Սամուելի քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 85։

14 «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 124—125։

15 Հ. Նալբանդյան, Արաբացի ոստիկանները Հայաստանում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 8, էջ 108)։

16 «Պատմութիւն Ղևոնդեայ», էջ 42, Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 179։ Այս խալիֆը նույնիսկ հրաման արձակեց, ըստ որի ոչ մի մահմեդական իրավունք չուներ բուն Արաբիայից դուրս ձեռք բերել անշարժ գույք և զբաղվել երկրագործությամբ (А. Мюллер, История ислама, т. I, С. Петербург, 1895, стр. 302).

17 «Պատմութիւն Ղևոնդեայ», էջ 118—119։

մար Մամիկոնյանների ձեռնարկած քայլերին հականերգործել են տեղացի որոշ իշխաններ, որոնց մեջ կարող էին լինել թե՛ Աշոտ Բագրատունու կողմնակիցները և թե՛ ընդհանրապես ոչ մի գերիշխանություն չճանաչելու հակվածները։ Որ իրոք Մամիկոնյանները հարուցում են նաև վասպուրականցիների մի մասի դժգոհությունը, երևում է Ղևոնդի այն հաղորդումից, ըստ որի Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանները Վասպուրականում «խոշտանգանս և տագնապ մեծ յարուցանէին ի վերայ երկրին. և հարկապահանջ բռնութեամբ վտանգէին զնոսա»[18]

Մամիկոնյանների ինքնակամ գործողությունները խորապես դժգոհեցրին նաև Աշոտ Բագրատունուն, որին խալիֆայությունը վստահել էր Հայաստանի կառավարչությունը։ Նա Մամիկոնյան եղբայրներին Վասպուրականից և ընդհանրապես քաղաքական ասպարեզից դուրս վանելու միտումով, մեկնեց Ասորիք՝ Մրվան խալիֆի մոտ։ Մամիկոնյան եղբայրները, որոնք իրենց հերթին հետամուտ էին Աշոտ Բագրատունուն ասպարեզից հեռացնելուն, օգտվելով առիթից, կարողացան համոզել Արմինիայի ոստիկան Իսահակ իբն Մուսլիմին (Մսլիմ) հայոց իշխան կարգել Գրիգոր Մամիկոնյանին[19]։ Հավանաբար Մուսլիմը նույնպես լավ չէր տրամադրված Աշոտի նկատմամբ և կամենում էր պառակտել հայոց ուժերը։ Սակայն Մրվանը Հայաստանի կառավարչի պաշտոնում վերահաստատեց Աշոտ Բագրատունուն և գլխատել տվեց Դավիթ Մամիկոնյանին։ Թեև Մամիկոնյանները Բագրատունիների դեմ պայքարում էին պատճառաբանելով նրանց արաբական կողմնորոշումը, բայց հարմարադեպ պահին իրենք էլ հակվեցին դեպի արաբ կառավարիչը[20]։

Հայաստանի արաբ կառավարչի սատարմամբ Գրիգոր Մամիկոնյանի հայոց իշխան դառնալը վկայում է, որ Մամիկոնյան եղբայրներն այս ժամանակ պայքարում էին առաջին հերթին Բագրատունիների դեմ՝ իրենց իրավունքների ընդլայնման միտումով։ Նրանց պայքարն ուղղված էր արաբների դեմ այնքանով, որքանով վերջիններս զորավիգ էին Բագրատունիներին։ Արաբները չէին վստահում բյուզանդական կողմնորոշում ունեցող հայ իշխաններին, որոնց թվում էին Մամիկոնյանները։ Մինչդեռ Բագրատունիները հետզհետե ձեռք էին բերում արաբների վստահությունը։ Ուշագրավ է, որ 745 թ. Իսահակ իբն Մուսլիմը հեռացվեց Արմինիայի ոստիկանի պաշտոնից։ Նոր ոստիկան Մուսաֆիր իբն Կազիրի օրոք ևս Մամիկոնյաններն ի զորու չեղան երկրորդական դիրքեր մղելու Բագրատունիներին։

Վերոշարադրյալից պետք է նաև մակաբերել, որ տվյալ շրջանում Վասպուրականի քաղաքական ամբողջացումը տակավին հնարավոր չէր իրականացնել, քանի որ տեղի իշխանական տոհմերից ոչ մեկը մնացած տոհմերի նկատմամբ չուներ կայուն գերիշխանություն։ Սրա հիմնական պատճառը ֆեոդալական ներհակություններն էին, որոնք արաբական տիրապետության

18 Նույն տեղում։

19 Այս պետք է տեղի ունեցած լինի 745 թ., քանզի Իսահակ իբն Մուսլիմը Արմինիայի կառավարիչ է եղել միայն այդ թվականին (Հ. Նալբանդյան, Նշվ. աշխ., էջ 110)։

20 Դեպքերի էությունից դատելով՝ խոսք չի կարող լինել VIII դ. կեսերին Հայաստանում (մասնավորապես Վասպուրականում) հակաարաբական ապստամբության մասին։ Ճիշտ է, արաբ պատմիչ Յակուբին հաղորդում է, թե հայերը 744 թ. սպանում են Արմինիայի կառավարիչ Ասիմ իբն Աբդալլահին, սակայն այս սպանության պարագաները որոշակի չեն, քանի որ այդ մասին հաղորդում է միայն Յակուբին, որը դեպքերին ժամանակակից չէ, իսկ հայ աղբյուրներն էլ ոչինչ չեն հաղորդում։

պայմաններում ունեցան նորանոր դրսևորումներ։ Վասպուրականի մեկ միասնական իշխանության վերածվելու ճանապարհին լուրջ խոչընդոտ էր Հայաստանում հաստատված արաբ գաղթականությունը։ VIII դ. առաջին կեսին Հայաստանի կարևոր կենտրոններում հաստատվեցին արաբական կայազորներ։ Ճիշտ է, վերջիններիս հիմնական նպատակը պայքարն էր Բյուզանդիայի դեմ[21], սակայն անհրաժեշտության դեպքում այդ պայքարն ուղղվում էր նաև ընդդիմադիր հայ իշխանների դեմ։ Արաբական տարրը հատկապես ուժեղ էր Վանա լճի շրջակայքում[22]։ Հ. Մարկվարտի կարծիքով՝ Գողթնը և Նախճավանը Վահան Գողթնացու նահատակումից հետո (737) դարձել են մահմեդական ամիրայություն[23]։ Սակայն Գողթնը հայերի իրավասության տակ է եղել հավանորեն մինչև X դ. սկիզբը[24]։

Հարավային Հայաստանի նախարարների մեջ որոշակի արմատներ էր գցել արաբական կողմնորոշումը, որը նրանց դիրքերի պահպանության լավագույն գրավականն էր։ Արաբները շարունակում էին առաջնություն տալ Բագրատունիների այն ճյուղին, որը մնացել էր Հարավային Հայաստանում։ Ղևոնդը գրում է, որ «Եզիտ կացուցանէր ի վերայ աշխարհիս իշխան ի նախարարացն Հայոց զԻսահակ որդի Բագարատայ ի նոյն տանէն իշխանին Աշոտոյ, որ էր որդի հօրեղբօր նորա»[25]։

Աբբասյան խալիֆայության հաստատումը նշանավորվեց Օմայանների հետ քիչ թե շատ մերձակցություն ունեցած ուժերի մեկուսացմամբ կամ հաշվեհարդարով։ Նույնիսկ Իրանը, որտեղից ծագել էր հակաօմանյան շարժումը, զերծ չմնաց դրանից։ Օմայաններին գործակցելու պատճառով պարսից ազնվականության որոշ մասը սրի քաշվեց[26]։ Աբբասյանների օրոք Հայաստանը նույնպես տուժեց Օմայաններին համագործակցելու պատճառով[27]։ Հայաստանը մեծապես վնասվեց նաև արաբա-բյուզանդական զինաբախումներից։ VIII դ. կեսերին արաբները պարբերաբար հարձակումներ էին գործում Բյուզանդիայի վրա, որից տուժում էր կողմերի երկրագործ բնակչությունը։ Հատկապես ծանր էր իրավիճակը 760-ական թվականներին[28]։ Աբբասյանների օրոք ստեղծված դառնազետ պայմաններում Վասպուրականի նախարարների զգալի մասը կամ անհետանում է քաղաքական ասպարեզից, կամ էլ համախմբվում հետզհետե գերազդեցիկ դիրքեր ձեռք բերող Արծրունիների շուրջը։ Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ 705 թ. հետո Վասպուրականում ասպարեզից վերացան Ռշտունիները[29], որպես ոստիկանի իշխանությանը հականերգործողներ[30]։

---

21 Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 43։

22 J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, s. 98.

23 Նույն տեղում, էջ 99։

24 Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 130—131։

25 «Պատմութիւն Ղեւոնդեայ», էջ 128։

26 А. Мюллер, История ислама, т. II, стр. 140—142.

27 H. Daghbaschean, Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni, Berlin, 1893, s. 56.

28 G. Fineay, History of the Buzantine Empire, London, 1856, p. 60—61.

29 J. Markwart, Südarmenien, s. 79.

30 Հավանաբար Ռշտունիների մնացորդները դրանից հետո ձուլվել են Արծրունիներին՝ կրելով նրանց տոհմանունը։ Նույնիսկ ավելի վաղ շրջանի Ռշտունիները երբեմն հորջորջվում

Հարավային Հայաստանի Բագրատունիները VIII դ. կեսերից Արծրունիների կողմից վերջնականապես դուրս են մղվում Վասպուրականից, իշխելով Մոկքում և Տարոնում։ Այդ մասին է վկայում այն, որ դրսեկ ցեղերի դեմ Վասպուրականի պաշտպանությունը գլխավորում են արդեն Արծրունիները։ 754 թ. գարնանը Ատրպատականի կողմերից ոմն Սուլեյմանի գլխավորությամբ մի հրոսախումբ է ներխուժում Վասպուրական, «գործելով զանարժան բարս սննդակից չար սերմանցն»[31]։ Դրանց դեմ են դուրս դալիս վասպուրականցիները՝ Վահան Արծրունու որդիներ Սահակի և Համազասպի գլխավորությամբ, որոնք զոհվում են անհավասար մարտում[32]։ Որ իրոք Վասպուրականի պաշտպանության գործը կազմակերպում էին Արծրունիները, երևում է նաև նրանից, որ հիշյալ հրոսախմբին հետագայում հակահարված է տալիս նահանգի ազատանին, դարձյալ Արծրունի իշխանի՝ Գագիկի, գլխավորությամբ, որին Ղևոնդը հորջորջում է «տէր Արծրունեաց տանն»։ Գագիկն ամրանում է Նկան ամրոցում, իր շուրջը համախմբելով «զնախարարս աշխարհին նոցին հեծելովք» և ասպատակներ սփռում Ատրպատականում ու Ջարևանդում[33]։ Թշնամուն միասնական հակահարված տալու պարագան վկայում է Վասպուրականի ուժերի համախմբման մասին։

770-ական թթ. Վասպուրականի քաղաքական ամբողջացումն ավելի հաստատուն է դառնում։ Արծրունիները գլխավորում են Վասպուրականի նախարարներին նաև 774—775 թթ. ապստամբության ժամանակ։ «Նախարարք տանն Արծրունեաց Համազասպ և եղբարք իւր և զօրք նորին մնացին անդէն ի կողմանս Վասպուրական աշխարհին. և Վասակ որդի Աշոտոյ և որք ի տոհմէ Ամատունեացն և Տրունեաց՝ մնացին անդէն»[34]։ Վասպուրականի նախարարներն ամրանում են բերդերում։ Այնուհետև, գրում է պատմագիրը, «գումարէին նախարարք ազգին Արծրունեաց զզօրս Վասպուրական աշխարհին, Համազասպ և եղբարք իւր և որք ի տոհմէ Ամատունեաց և զօրքն որ ընդ նոսա»[35] և շարժվում են Արճեշի վրա, օգնության կանչելով Աշոտ Բագրատունու որդի Վասակին (Սմբատ սպարապետի եղբորը)։ Ընդսմին, Բագրատունյաց որոշ գործիչներ խալիֆայության կողմը հակված լինելու պատճառով վստահություն չէին ներշնչում Վասպուրականի ապստամբներին։ Սահակ Բագրատունու որդի Աշոտը, որ գտնվում էր Խլաթում, թեև Վասպուրականի նախարարներին իմաց է տալիս արաբ զորքի ժամանման մասին, սա-

---

են «Արծրունի»։ Այսպես, մի «Ոսկեփորիկում» Թեոդորոս Ռշտունին անվանված է «իշխան Արծրունեաց» (Շ ա պ ո ւ հ Բ ա գ ր ա տ ո ւ ն ի, Պատմութիւն, էջմիածին, 1921, էջ 25)։ Հովհան Մամիկոնյանը Վարդ Պատրիկ Ռշտունուն անվանում է «իշխան Արծրունեաց» (Հ ո վ հ. Մ ա մ ի կ ո ն ե ա ն, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 149, նաև Ե. Լ ա լ ա յ ա ն, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, I, Թիֆլիս, 1915, էջ 318)։

31 «Պատմութիւն Ղ և ո ն դ ե ա յ», էջ 130, Հ. Տ ա շ յ ա ն, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց, Վիեննա, 1895, էջ 40։

32 «Պատմութիւն Ղ և ո ն դ ե ա յ», էջ 130։

33 Նույն տեղում, էջ 131, Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր օ ն ե ց ի, էջ 133։

34 «Պատմութիւն Ղ և ո ն դ ե ա յ», էջ 144։

35 Նույն տեղում, էջ 146։ Ղևոնդը գրում է, որ Վասպուրականի հայ ազատանին կասկածում էր, թե Աշոտ Բագրատունին «դաւաղ խորամանկութեամբ կամի փրկել զքաղաքն ի պաշարմանէ անտի, իբր մտերիմ զինքն ցուցանել իսմայելացւոցն» (Ղ և ո ն դ, էջ 146)։ Կասկածանքի հիմքում կարող էին լինել Արծրունիների և Բագրատունիների միջև եղած հակասությունները Հարավային Հայաստանում գերիշխանության հարցում։

կայն նրանք հավատ չեն ընծայում նրան և «զառաջի արկեալն իւրեանց խոկային կատարել»[36]։

Վասպուրականի ապստամբների հավաքակայանն է դառնում Առբերանի դավառի Բերկրի ավանը, որտեղ հավաքվում են ո՛չ միայն նախարարները, այլև ռամիկները։ Բերկրիում ապստամբների ղեկավար Համազասպ Արծրունին տեղեկանում է, որ Խլաթ է ժամանել արաբական մեծաթիվ զորք, որը սպասում է ապստամբ հայերի հարձակմանը։ Սակայն, գրում է պատմիչը, Վասպուրականի ազատազորքն այնքան էր լցված հաղթելու կամքով, որ Համազասպը հարվածում է գուժաբերին, «իբրև զհրապուրիչ ստութեան. և ինքն խրոխտացեալ գնաց ի վերայ Արճեշն աւանի հանդերձ զօրոքն իւրովք»[37]։ Վասպուրականի ազատանին կամենում էր Վանա լճի ոլորտից դուրս վանել նորեկ արաբական տարրը, ապահովել Վասպուրականի անվտանգությունը։ Գնունիների, որպես Արծրունիների ազգակիցների, տիրույթները վտանգից զերծ պահելու կանխահոգությունը նույնպես դեր ուներ (Բերկրիում ազատազորքի գումարելը, անշուշտ, պատահական քայլ չէր)։ Սակայն տեղի արաբները Խլաթի արաբական կայազորի հրամանատար Ամրին իմաց են տալիս հայերի զորաշարժի մասին։ Ամրը դարանամուտ է լինում Արճեշի մոտ։ Երբ ապստամբները գալիս են դեպի Արճեշ, Ամրի զորքը թաքստոցից հարձակվում է նրանց վրա, կոտորելով «զմեծն մասն հետևակ զօրուն, որ յաշխարհաբնակ մարդկանէն էին..., մերկք և առանց զինուց և անհմուտք պատերազմի»[38]։ Նախարարներից զոհվում են չորս հոգի (երեքը Տրունիներից)։ Արաբական հրամանատարությունը կամենում էր այնպես անել, որպեսզի Հարավային Հայաստանի և Բարձր Հայքի ապստամբները չմիանան։ Այս նկատառումով արաբները դուրս են գալիս Ապահունիք և փակում ապստամբների ճանապարհը[39]։ Դրա հետևանքով Հարավային Հայաստանի և Բարձր Հայքի ապստամբները չկարողացան միանալ, և արաբները զատ-զատ հաշվեհարդար տեսան նրանց հետ։ Ապստամբության պարտությունը Վասպուրականի զինական ուժերի ջլատումն էր, բայց ոչ իսպառ ոչնչացումը։ Արաբները, գրում է պատմագիրը, «եկանէին ի վերայ ամրոցաց և նուաճէին զապաստանեալսն յամուրսն կոչել ի խաղաղութիւն, և տային գիր երդման և իջո ցանէին յամրոցացն»[40]. Այսպիսով, ապստամբ հայերը ստիպված տեղի են տալիս։

775 թ. Բյուզանդիան հաջող կռիվներ էր մղում արաբների դեմ[41]։ Հայ որոշ իշխաններ ժամանակավորապես հակվում են բյուզանդացիների կողմը։ Արաբների դեմ կռվող բյուզանդական երեք զորապետներից մեկը Վասպուրականի (Անձևացիքի) իշխան Տաճատն էր (Գրիգորի որդին), որը հետագայում անցավ արաբների կողմը։

Բագրևանդի ճակատամարտից հետո Մուշեղ Մամիկոնյանի դուստրերը և երկու որդիներն ապաստանեցին Վասպուրականում։ Սակայն Արծրունյաց

---

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում։

38 Նույն տեղում, էջ 147։

39 Նույն տեղում, էջ 147—148։

40 Նույն տեղում, էջ 152։

41 Г. Гельцер, Очерк политической истории Византии, С. Петербург, 1912, стр. 67—70.

իշխան Մեհրուժանը, վախենալով, որ նրանք ապագայում կդառնան վտանգավոր ախոյաններ, արաբներին սիրաշահելու միտումով նրանց սպանել տրվեց։ Վարդան պատմիչը գրում է, որ Մեհրուժան Արծրունին Մամիկոնյան եղբայրներին սպանել տվեց այն պատճառով, «որպէս թէ ի պատճառս հօր նոցա եղև աղէտն մեծ»[42]։ Մուշեղ Մամիկոնյանի դուստրերից մեկը կամովին ամուսնացավ մահմեդական ամիրա Ջահհաֆի հետ, որպեսզի զորավիգ ունենա ընդդեմ հայ իշխանների։ Ամուսինը, որին ի միջի այլոց խալիֆայությունը չէր ճանաչում, բախվեց ոչ թե Արծրունիների, որոնք էին սպանել Մուշեղի որդիներին, այլ Բագրատունիների հետ։ Արծրունիներն այս շրջանում հետևելով Բագրատունիներին, հակվում են դեպի արաբները և ամրապնդում իրենց դերակայությունը Վասպուրականում։ Քաղաքական կողմնորոշման նույնությունը բնականաբար հետագայում հիմք էր դառնալու Բագրատունիների և Արծրունիների մերձեցման համար։ Եթե Արծրունիների գործունեության շառավիղը դուրս չէր գալիս Վասպուրականից, ապա Բագրատունիները հետամտում էին իրենց գերիշխանության տակ ամբողջ Հայաստանի քաղաքական միավորման նպատակ։ Վասպուրականում Արծրունիների գերիշխանությունը փաստ էր, որի հետ Բագրատունիները չէին կարող հաշվի չնստել։ Մյուս կողմից՝ Վասպուրականի վերածվելը քաղաքական միահար մարմնի ուժեղացնում էր Բագրատունիների դիրքերը։ Վասպուրականում Արծրունիների տիրապետությունը ճանաչում են ո՛չ միայն Բագրատունիները, այլև խալիֆայությունը, որովհետև Արծրունիները հակվում են արաբների կողմը։ Ուշագրավ է, որ երբ Արմինիայի ոստիկան Օթմանը 785 թ. պաշտոնազրկվեց, նոր ոստիկան Խուզայմա իբն Խազիմին ընդառաջ գնացին նաև Արծրունի իշխանները, որոնցից Ղևոնդը հանվանե հիշում է Համազասպին, Սահակին և Մեհրուժանին[43]։ Սակայն նոր ոստիկանը հայ նախարարներին բանտ նետեց և ամբաստանեց խալիֆի առջև, որից նույնիսկ նախարարներին մահապատժի ենթարկելու հրաման ստացավ։ Մահապատժից փրկվեց միայն Մեհրուժանը, այն էլ հավատուրացության գնով։ Դա, ըստ Ղևոնդի, կատարվեց 784 թ.։ Ստեղծված ծանր պայմաններում Վասպուրականի հայ ազգաբնակչությունը կրում է նորանոր տառապանքներ։ Հայաստանում, գրում է պատմիչը, «ոչ ոք էր տէր ընչից իւրոց. այլ առհասարակ վարէին յաւարի։ Եւ բազումք ինքնակամութեամբ թողուին զհօտս և զանդեայս և գնային փախըստական վասն ոչ բերելոյ զծանրութիւն աղետիցն...»[44]։ Յուսուֆ ոստիկանի օրոք (787) Նիզարի ցեղախմբից Հայաստան տեղափոխվեցին նոր արաբ գաղթականներ։ Մյուս կողմից՝ բնիկ հայ բնակչությունը, չհանդուրժելով ծանր պայմանները, լքում է հայրենի երկիրը։ Օբայդուլլահ ոստիկանի օրոք (788—790) Վասպուրականի Արտազ գավառը գրեթե դատարկվեց հայությունից։ Հայ բնակչությունը Համամ Ամատունու, նրա հոր՝ Շապուհի և ուրիշ նախարարների առաջնորդությամբ գաղթեց Բյուզանդիա (Խաղտիք)։ Գաղթողների թիվը Ղևոնդը հաշվում է ավելի քան 12 հազար, «հանդերձ կանամբք և մանկտեաւ»[45]։ Գաղթը կատարվել է հիմնականում Արտազից։

---

42 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 76։

43 «Պատմութիւն Ղեոնդեայ», էջ 162։

44 Նույն տեղում, էջ 168։

45 Նույն տեղում։

VIII դ. վերջերն ընդհանրապես ծանր շրջան էին Հայաստանի համար։ Ն. Մառը գրում է, որ այս ժամանակ Հայաստանը «ամբողջապես քայքայվեց արաբների կողմից և նախորդ դարերի մշակութային ողջ աշխատանքների պտուղները ոչնչացվեցին»[46]*։ Նույնն էր իրավիճակը նաև Վասպուրականում, որտեղ հայ իշխանները Արծրունիների գլխավորությամբ կարողացան ոչ միայն պահպանել իրենց գոյությունը, այլև գլուխ բերել հույժ ծանր ու դժվարին գործ՝ Վասպուրականի քաղաքական ամբողջացումը, որ հիմնականում հետևանք էր օտար բռնացումների դեմ նահանգի ազնվականության միասնական դիմակայության։ Նոր և ծանր պայմաններում նահանգի միասնությունը շարունակում է մնալ որպես քաղաքական, մշակութային և էթնիկական գոյապահպանման կարևոր միջոց։*

ПОЛИТИЧЕСКОЕ ОБЪЕДИНЕНИЕ ВАСПУРАКАНА (VIII в.)

В. М. ВАРДАНЯН

Резюме

На рубеже VII—VIII вв. Васпуракан представлял собой ряд полузависимых княжеств. До VIII в. в крае ведущую роль играли Багратиды и Рштуниды. Насильственная политика Арабского халифата толкнула феодалов Васпуракана на сплочение. Однако добиться политического объединения в крае не удалось ни Багратидам, ни Рштунидам, ни другим знатным фамилиям. Со второй половины VIII в. дело защиты Васпуракана возглавляли Арцруниды. При Аббасидах Васпуракан оказался в трудном положении: часть нахараров либо сошла с политической арены, либо сплотилась вокруг Арцрунидов. Политическое объединение Васпуракана в те тяжелые времена было важным средством политического, культурного и этнического существования.

[46] Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения, Петроград, 1915, стр. 37.